



REDEMOS

RECONFIGURING EU DEMOCRACY
SUPPORT. TOWARDS A SUSTAINED
DEMOS IN THE EU'S EASTERN
NEIGHBOURHOOD

Քաղաքականության համառոտագիր 4

**Տրանսատլանտյան ազդեցություն. ինչպես են Միացյալ
Նահանգները քաղաքական փոփոխություններ
ձևավորում ԵՄ արևելյան հարևանության երկրներում**

Կախա Գոգոլաշվիլի, GFSISE

Սեպտեմբեր, 2025



The REDEMOS project has received funding from the European Union's Horizon Europe research and innovation programme under grant agreement No 101061738. The Associated Partner University of Surrey has received funding from UK Research and Innovation (UKRI) under the UK government's Horizon Europe funding guarantee under grant number 10040721. The Associated Partner University of St. Gallen has received funding from the Swiss State Secretariat for Education, Research and Innovation (SERI). Views and opinions expressed are, however, those of the author(s) only and do not necessarily reflect those of the European Union, UKRI and SERI. Neither the European Union nor UKRI or SERI can be held responsible for them.

Իրավիճակի նկարագրում

1990-ական և 2000-ական թվականների ընթացքում Միացյալ Նահանգները ԵՄ արևելյան հարևանությունը դիտարկում էր որպես ռազմավարական բուժքեր եվրատլանտյան ինստիտուտների և Ռուսաստանի միջև՝ միավորելով ժողովրդավարական կառավարումը, Էներգետիկ անվտանգությունը և հակամարտությունների մեղմացումը որպես փոխադարձաբար ամրապնդող առաջնահերթություններ: Արևելյան հարևանությունում ժողովրդավարական բեկումները դարձան առանցքային, երբ ԱՄՆ-ի աջակցությունը՝ ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID), ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED), ժողովրդավարական ազգային ինստիտուտի (NDI), Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) և Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) նման կազմակերպությունների միջոցով սկսեց նպաստել քաղաքացիական հասարակության ամրապնդմանը, ընտրական գործընթացների բարելավմանը և ինստիտուցիոնալ բարեփոխումներին: Ռուսաստանի կողմից Կրաստանի (2008թ.) և Ուկրաինայի (2014թ., 2022թ.) դեմ իրականացված հարձակումներից հետո ներգրավվածությունն ավելի խորացավ և ԱՄՆ-ի հաջորդական վարչակազմերը աստիճանաբար սկսեցին Ռուսաստանին դիտարկել որպես համակարգային սպառնալիք: 2022թ.-ի ԱՄՆ Ազգային անվտանգության ռազմավարության մեջ Արևելյան հարևանությունը բացահայտ կերպով ներկայացվեց որպես ժողովրդավարության և ավտորիտարիզմի միջև գլոբալ մրցակցության առաջնագիծ: Այնուամենայնիվ, ԱՄՆ-ի ներգրավվածությունը ժամանակի ընթացքում դարձավ պակաս հետևողական: Բելառուսում և Ադրբեջանում ավտորիտար համակարգերի կայունությունը, Կրաստանում ժողովրդավարական հետընթացը, ինչպես նաև ԱՄՆ արտաքին քաղաքական առաջնահերթությունների փոփոխությունը, մասնավորապես ժողովրդավարության խթանման նախաձեռնությունները Թրամփի երկրորդ նախագահության ընթացքում, նվազեցրել են ռազմավարական համաձայնեցվածությունը: Արդյունքում ԱՄՆ-ի աջակցության արդյունավետությունը դարձել է մեծապես կախված կոնկրետ իրավիճակից: Հետազոտությունները ևս վկայում են, որ չկա ժողովրդավարացման համընդհանուր ազդեցություն. փոխարենը նկատվում են «ազդեցության օջախներ», հատկապես քաղաքացիական հասարակության զարգացման, ընտրական բարեփոխումների և դատական համակարգի ամրապնդման ոլորտներում: Կրաստանը և Հայաստանը ցույց են տալիս, թե ինչպես կարող է թիրախային աջակցությունը խթանել ժողովրդավարական հնարավորությունները, մինչդեռ Ուկրաինան և Մոլդովան վկայում են, որ առաջընթացը հնարավոր է, սակայն այն սահմանափակ է պատերազմի կամ պետական համակարգի զավթման պայմաններում: Եվ հակառակը, Բելառուսում և Ադրբեջանում խորապես արմատավորված ավտորիտար համակարգերը հիմնականում չեզոքացրել են ԱՄՆ-ի ազդեցությունը՝ աջակցությունը սահմանափակելով քաղաքացիական հասարակությանը և լրատվամիջոցներին ուղղված փոքրածավալ ծրագրերի շրջանակում՝ առանց համակարգային փոփոխությունների: Ընդհանուր առմամբ, ԱՄՆ-ի աջակցությունն առավել արդյունավետ է եղել, երբ ներքին բարեփոխումներ առաջ մղող դաշինքները և քաղաքական բազմակարծությունը թույլ են տվել, որ արտաքին աջակցությունը ամրապնդվի: Սակայն վերջին տարիների հետընթացը՝ նույնիսկ նախկինում հաջողված օրինակների դեպքում, ցույց է տալիս ժողովրդավարական ձեռքբերումների խոցելիությունը:

Հետևաբար, քաղաքականության այս համառոտագրում դիտարկվում է այն հարցադրումը, թե ինչպես կարող է ԱՄՆ-ի ներգրավվածությունը դառնալ ավելի հետևողական և դիմակայուն՝ անցում կատարելով ճգնաժամով պայմանավորված արձագանքներից դեպի հաջորդական գործողություններ, որոնք ուղղված կլինեն ինստիտուտների ամրապնդմանը, քաղաքացիական հասարակության պաշտպանությանը և կնվազեցնեն ավտորիտար ազդեցության նկատմամբ խոցելիությունը՝ միաժամանակ ապահովելով ԵՄ առաջնահերթությունների և ընթացիկ տրանսատլանտյան նախաձեռնությունների հետ առավել սերտ համապատասխանություն:

Հիմնական եզրակացություններ

- **ԱՄՆ-ի աջակցությունը եղել է անհամաչափ, սակայն ռազմավարական առումով նշանակալի,** ընդ որում Ուկրաինան և Վրաստանը պատմականորեն ստացել են աջակցության ամենամեծ ծավալները՝ պայմանավորված իրենց աշխարհաքաղաքական դիրքով և բարեփոխումների ներուժով: Հայաստանը և Մոլդովան օգտվել են ավելի թիրախային աջակցությունից, մինչդեռ Բելառուսը և Ադրբեջանը շարունակում են մնալ խիստ սահմանափակ պայմաններում:
- **ԱՄՆ-ի ազգային անվտանգության հաջորդող ռազմավարությունները ավելի հաճախ են դիտարկում Արևելյան հարևանությունը մեծ տերությունների մրցակցության համատեքստում:** Ռուսաստանը հետևողականորեն ներկայացվում է որպես ապակայունացնող դերակատար, իսկ Չինաստանը՝ որպես կարևոր արտաքին մրցակից, հատկապես տեխնոլոգիաների, ենթակառուցվածքների և կառավարման մոդելների ոլորտներում:
- **ԱՄՆ-ի ժողովրդավարության աջակցությունը առավել նշանակալի է կիսաբաց քաղաքական համակարգերում,** որտեղ առկա քաղաքացիական հասարակությունը, անկախ լրատվամիջոցներն ու քաղաքական բազմակարծությունը կարող են արդյունավետորեն յուրացնել արտաքին աջակցությունը:
- **Ավտորիտար դիմադրությունը խիստ սահմանափակում է ԱՄՆ-ի աջակցության ազդեցությունը:** Բելառուսում և Ադրբեջանում սահմանափակող իրավական շրջանակները, բռնաճնշումները և պետության թշնամանքը չեզոքացրել են ժողովրդավարության խթանման ջանքերի մեծ մասը:
- **ԱՄՆ-ի աջակցությունը հետևում է «հնարավորությունների պատուհաններին»:** Ֆինանսավորումը աճում է ժողովրդավարական բեկումներից հետո (Վրաստան՝ 2003թ., Ուկրաինա՝ 2014թ., Հայաստան՝ 2018թ.), սակայն հակված է նվազել, երբ բարեփոխումները լճանում են կամ արձանագրվում է հետընթաց:
- **Թրամփի երկրորդ նախագահության ընթացքում արձանագրված խոշոր ռազմավարական շրջադարձով պայմանավորված՝** ԱՄՆ-ի աջակցությունը ժողովրդավարության խթանումից վերադարձվել է դեպի անվտանգություն, մեծ տերությունների մրցակցություն և պարտավորությունների փոխանցում եվրոպային: Սա վտանգ է ստեղծում ԵՄ արևելյան հարևանության ողջ տարածաշրջանում կառավարման բարեփոխումների նկատմամբ ԱՄՆ-ի լծակների թուլացման տեսանկյունից:
- **Քաղաքացիական հասարակության դիմակայությունը ԱՄՆ-ի երկարաժամկետ օգնության ամենամնայուն ժառանգությունն է,** հատկապես Ուկրաինայում, Վրաստանում, Հայաստանում և Մոլդովայում, որտեղ տասնամյակների աջակցությունը շարունակում է նպաստել բարեփոխումներ խթանող դաշինքների ձևավորմանն ու վերահսկողական գործառույթներին:

Քաղաքականության վերաբերյալ առաջարկներ

- **Վերահաստատել ԱՄՆ-ի ռազմավարական հանձնառությունը Արևելյան հարևանության նկատմամբ՝ որպես եվրոպական անվտանգության անկյունաքար:** Արևելյան հարևանությունը կենտրոնական նշանակություն ունի ավելի լայն եվրատլանտյան կայունության համար: Ժողովրդավարական աջակցության մեջ կրկին ներդրում կատարելը, հատկապես Ուկրաինայում, Մոլդովայում, Հայաստանում և Վրաստանում, կամրապնդի ինստիտուցիոնալ դիմակայությունը Ռուսաստանի և Չինաստանի ազդեցության նկատմամբ: ԱՄՆ-ի քաղաքականությունը պետք է հստակ կապի կայունությունը ժողովրդավարական կառավարման և օրենքի գերակայության հետ:
- **Առաջնահերթություն տալ ճկուն, երկարաժամկետ և քաղաքական համատեքստին հարմարեցված ժողովրդավարական աջակցությանը:** Օգնությունը պետք է համապատասխանի քաղաքականապես բաց լինելու տարբեր մակարդակներին: Կիսաբաց համակարգերում ԱՄՆ-ը պետք է ընդլայնի իր աջակցությունը՝ ուղղված անկախ լրատվամիջոցներին, դատական բարեփոխումներին, հակակոռուպցիոն ջանքերին, ապակենտրոնացմանը և իրավապաշտպան ՅԿ-ներին: Փակ ռեժիմներում օգնությունը պետք է ուղղվի արտաքսման մեջ գործող քաղաքացիական հասարակությանը, թվային անվտանգությանը և անկախ տեղեկատվական ալիքներին:
- **ԵՄ-ի հետ խորացնել համակարգումը և խուսափել զուգահեռ, մասնատված ժողովրդավարության աջակցության ուղիներից:** Հաշվի առնելով Եվրոպայի աշխարհագրական և քաղաքական մերձավորությունը՝ ԱՄՆ-ԵՄ համաձայնեցված գործողությունները կենսական նշանակություն ունեն: Համատեղ ծրագրերի իրականացումը, համաֆինանսավորումը և միասնական ուղերձները կօգնեն չափավորել ավտորիտար հակազդեցությունը և կուժեղացնեն ճնշումը հետընթաց արձանագրող կառավարությունների նկատմամբ:
- **Ամրապնդել դիմալայնությունը Ռուսաստանի և Չինաստանի ավտորիտար ազդեցության նկատմամբ:** Աջակցությունը պետք է ընդլայնվի կիբերանվտանգության, ապատեղեկատվության նկատմամբ դիմակայության և քաղաքական ինստիտուտների պաշտպանության ոլորտներում: ԱՄՆ-ը պետք է նաև ուժեղացնի վերահսկողությունը չինական հսկողության տեխնոլոգիաների և ենթակառուցվածքային ներդրումների նկատմամբ, որոնք խաթարում են թափանցիկությունն ու քաղաքացիական ազատությունները:
- **Խթալուսել ժողովրդավարական առաջընթացը և արագ արձագանքել հետընթացին:** Ներդնել ավելի հստակ պայմանականություն՝ բարեփոխումների դեպքում աջակցության մեծացում, իսկ ժողովրդավարական անկման դեպքում՝ կրճատում, վերաուղղորդում կամ սառեցում: Վերջին շրջանում Վրաստանին ուղղվող աջակցության վերազնահատումը ցույց է տալիս, թե Վաշինգտոնը ինչ լծակներ կարող է ունենալ, երբ պայմանականությունը վստահելի է:
- **Ներդրում քաղաքացիական հասարակության և երիտասարդների երկարաժամկետ ներգրավվածության գործում:** Կայուն ժողովրդավարությունը պահանջում է սերունդների նորացում: Քաղաքացիական կրթությանը, երիտասարդական առաջնորդության ծրագրերին, հետաքննող լրագրությանը և տեղական ինքնակառավարմանն ուղղված աջակցության ընդլայնումն ամրապնդում է ժողովրդավարական դիմակայության հասարակական հիմքերը Արևելյան հարևանության ողջ տարածաշրջանում:
- **Ինստիտուցիոնալ կարողությունների վերականգնումը պետք է ներառվի ԱՄՆ արտաքին քաղաքական ապագա առաջնահերթությունների մեջ:** ԱՄՆ ՄԶԳ-ի և այլ գործիքների կրճատումը ԱՄՆ-ի ազդեցության թուլացման վտանգ է ստեղծում հենց այն ժամանակ, երբ աճում է ժողովրդավարական անկայունությունը: Ինստիտուցիոնալ կարողությունների վերականգնումը պետք է ներառվի Արևելյան հարևանության նկատմամբ ԱՄՆ արտաքին քաղաքական պլանավորման մեջ:

Ամբողջական հետազոտությունը՝ [ՌԵԴԵՄՈՍ-ի քաղաքականության փաստաթուղթ. Միացյալ Նահանգների դերը ԵՄ արևելյան հարևանության երկրների քաղաքական փոխակերպումներում](#), հասանելի է հետևյալ հղումով՝ [Policy Papers – REDEMOS](#)



**REDEMOS: REconfiguring EU DEMOcracy Support.
Towards a sustained demos in the EU's Eastern Neighbourhood**

REDEMOS- 101061738

HORIZON-CL2-2021-DEMOCRACY-01-04

Dr Mădălina Dobrescu, NTNU
info@redemos.eu

 redemos.eu

 [@REDEMOS_eu](https://twitter.com/REDEMOS_eu)

 [REDEMOS Horizon Europe Project](https://www.linkedin.com/company/redemos-horizon-europe-project)